Հայտարարություն

ԵՊՀ ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնը **2022 թ. ապրիլի 2-ին ժ.11^{00}-ին** Գավառի թիվ 1 հիմնական դպրոցում կազմակերպելու է դպրոցականների օլիմպիադայի I փուլը:
Օլիմպիադան կանցկացվի **<u>հանրակրթական</u>՝**

մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ինֆորմատիկա

և <u>լրացուցիչ</u> կրթական առարկաներից՝

հայոց եկեղեցու պատմություն, տրամաբանություն, սոցիոլոգիա, պետության և իրավունքի հիմունքներ, էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ, տնտեսագիտություն:

«Ինֆորմատիկա» առարկայից օլիմպիադան կանցկացվի մեկ փուլով[a] **ապրիլի 2-ին ժ.11^{00} -ին:**

Օլիմպիադան նախատեսված է 12-րդ դասարանի աշակերտների համար:
I փուլի հաղթողները կմասնակցեն օլիմպիադայի II փուլին, որը տեղի կունենա **ապրիլի 16-ին ժ.11^{00}-ին** Երևանի պետական համալսարանում:
Տեղեկացվում է, որ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ օլիմպիադայում **<u>հանրակրթական</u>** առարկաներից հաղթած (I, II և III կարգի դիպլոմների արժանացած) աշակերտներին Համալսարանի վճարովի համակարգ ընդունվելու դեպքում առաջին կուրսում կտրամադրվի համապատասխանաբար 50, 40 և 30 տոկոս ուսման վարձի զեղչ:
Անհրաժեշտ տեղեկությունների համար զանգահարել 094044890 հեռախոսահամարով՝ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության բաժնի պետ Համբարձում Սաֆարյանին:

Գեղարքունիքի մարզպետարանի ԿՄՍ վարչություն